ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 11. 1955 Общественные науки

Դ. ԴԵՄԻՐՃՅԱՆ

(Հայկական ՍՍՌ Գիտ. ակադեմիայի իսկական անդամ)

ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Մեր մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանի ծննդյան 80-ամյակը, որ կատարում ենք այժմ՝ թերևս մի ջերմագինորեն սպասված առիթ է, կամ լավ է ասել՝ ժամանակն է, որ հայ ժողովուրդն ասի իր սրտի խոսքը իր բանաստեղծին։

Նշելով այս 80-ամյակը, մենք կատարում ենք համազգային մի հոբելյան, համաժողովրդական տոնակատարություն։

Ժամանակն է նաև պարզ ու կոնկրետ պատկերացնել Ավ. Իսահակյանի ինքնությունը։ Արդյոք «ժողովրդական» պոե՞տ է նա, ինչպես գործ են ածում կենցաղում այս տերմինը, թե մի այլ ուղղության։

Ո՞վ է Ավետիք Իսահակյանը, ո՞րտեղից հայտնվեց նա մեր գրականության մեջ։ Այս հարցի պատասխանը մենք բոլորս գիտենք և գիտեինք հենց առաջին օրը, երբ նա հայտնվեց։ Նա եկավ որպես ժողովրդի բանաստեղծ։ Բայց ժողովրդական խոսքը, որ հետո կտեսնենք, շատ անորոշ խոսք է, դեռ սակավ է որոշում Ավ. Իսահակյանի ինքնությունը, որ շատ է բարդ և բազմաբովանդակ։ Ավ. Իսահակյանի երգին իբրև նյութ ծառայել են՝ հայ գյուղական կյանքի դեպքերն ու պատկերները, բայց նա երգել է նաև իր ժողովրդի անցյալն ու ներկան, իր հայրենի հողերկիրը, ժողովրդական-ազգային վիշտն ու բաղձանքները, բողոքել է հասարակական շարիքի և ճնշման դեմ, լսեցրել է չքավորի մորմոքն ու ցասումը, մարգարեական անեծքով մտրակել է հարուստի ագահությունն ու «ոսկու ծարավը», երգել «համաշխարհային վիշտը», տիեզերական խոհեր է բարբառել։

Այս ամենը խորացրել, լայնացրել է Ավ. Իսահակյանի երգի նյութը։

Ահա այս առումով նա համաժողովրդական է, համահայրենական և համաշխարհային։ Ուրեմն երբ ասում ենք ժողովրդական, մենք այն հասկանում ենք լայն առումով, ավելի լավ է ասել՝ ճիշտ առումով։ Որովհետև խորապես համաշխարհային է այն բանաստեղծը, որ խորապես ժողովրդական է։ Որ ժողովրդական լինելո՛վ է մի բանաստեղծ հայրենական և հայրենական լինելո՛վ է համաշխարհային։ Որովհետև հայրենիքը ժողովուրդն է։ Մարդկությունը անժողովրդական, համաշխարհային հանճար չի տվել, նաև չի տվել նացիոնալիստական ոչ մի հանճար։ Ով չունի իր հայրենիքը, նա չունի և ոչ մի հայրենիք։ Եվ Աբովյանի ու Իսահակյանի սերը դեպի իրենց հայրենիքը գալիս է այն ժողովրդից, որի հարազատ զավակները եղան նրանք։

Իսահակյանը հայրենացրեց իր երկրի բնությունը, ժողովրդականացրեց իր հայրենիքը, դրեց իր ժողովրդի կնիքը հայրենի դաշտերի ու լեռների վրա, միացրեց ժողովուրդն ու հայրենի հողն իրար հետ։

Այսպես կարող էր անել մի բանաստեղծ, որի հայրենիքը ժողովուրդն էր։ Եվ ժողովրդի պես հարազատ, յուրահատուկ սիրով նա սեփականացրեց այն

երկիրը, հողը, ուր ծնվել ու ինքնացել էր նաև հայ ժողովուրդը։ Նա դրսևորեց հայ ժողովրդի սիրտն ու հոգին, ցույց տվեց նրան հատուկ սիրելի կողմերը, նրա հոգու խորքերում ջերմորեն պահված վեհ զգացումները։ Նա խորը սիրել տվեց իր հայրենիքը, իր ժողովուրդը։ Այն ժողովուրդը, որ բազմադարյան կյանքով ապրել է Մասիսի հետ, Մասիսի հետ, որ եղել է նրա դարավոր ուսուցիչը, որին դարերով նայել է նա և ուսել դիմացկունություն, վեհություն, հավերժություն, այսինքն ճիշտը՝ նա ինքը տվել է նրան մի ոգի, որ իր դարևոր պատմական և հասարակական կյանքի բովանդակությունն է եղել։ Եվ այդպես իր Արագածը, իր Արաքսը, իր Սևանը, իր Զանգին։

Ավ. Իսահակյանի ժողովուրդը ծնվել, ստեղծվել էր մի ուրիշ կոնկրետ հող-երկրում. և իր բազմադարյան կյանքում թրջել է այդ հող-երկիրը իր աշխատանքի քրտինքով, իր պայքարի արյունով, այնուհետև մտածել է. ստեղծագործել, զարգացել, ինքնացել է որպես հայ ժողովուրդ և միասնացել դրա հետ, դառել մի դարևոր հաստատություն։

Այդպես եղավ և Ավետիք Իսահակյանը, այդպես նա ինքնացավ, միասնացավ իր ժողովրդի և իր հող-հայրենիքի հետ։ Եվ եթե Խաչատուր Աբովյանը՝ հայ ժողովրդի պատմական որոշ մոմենտի հոգեբանությամբ մոայլված՝ լցրեց հայրենի ձորերն ու լեռները, ողջ բնությունը մահվան սպառնալիքներով ու սարսափներով, ապա Իսահակյանը տոգորեց հայրենի բնությունը վշտով ու տխրությամբ, երբեմնակի ծիծաղկոտ ծաղկով ու աստղալից գիշերվա երազներով, շամբերի թախծալի մտորումներով։ Մեզ չեն շփոթեցնի նրա առաջին գրական փորձերը, որ նա կատարեց բարձր գրական լեզվով, ինչպես մեզ չպետք է շփոթեցնեն նրա վերջին շրջանի ստեղծագործությունները, որ կատարվեցին գերազանց գրական լեզվով։ Այս երկրորդ մոմենտը չպետք է մոռանալ... Հիշենք, թե ինչ գրական միջավայրում սկսեց Ավ. Իսահակյանը։ Դա մեր նոր բանաստեղծության գարունն էր, որ բերեց Հովհաննես Հովհաննիսյանը, Գամառ Քաթիպան և Շահազիզը արդեն հանձնվում էին գրականության պատմության։ Ավ. Իսահակյանը՝ թերևս և աննկատելի իր համար՝ սկսեց իր ուսուցչի՝ Հով. Հովհաննիսյանի ոճով։ Դա արձագանք չէր խորթ ու սխալ երգի։ Հովհաննես Հովհաննիսյանը կենդանի խոսքի բանաստեղծ էր։ Բնությունն ու հայրենիքի ներկան և անցյալը նա սրտի խոսքով ներկայացրեց։ Այդ ոճը չմոռացավ Ավ. Իսահակյանը, նա դարձավ դրան երկրորդ անգամ գրական լեզվին անցնելիս։ Այս մասին հետո։ Բայց մի մոտիվ Հովհ. Հովհաննիսյանի ստեղծագործության մեջ վճռական դեր կատարեց Ավ. Իսահակյանի պոեզիայի սկզբնավորման համար։ Դրանք ժողովրդի լեզվա-ոճական ձևով ու բնույթով մի քանի երգեր էին, ինչպես օրինակ.

Արաղն եկավ լափին տալով,
Ժեռ քարերին, ափին տալով,
Ո՞րտեղ թաղեմ ես իմ դարդը՝
Չոր գլուխս տափին տալով։

Այս երգը մինչև զառանցանքի հասցնող, կախարդիչ բան եղավ շատերի համար, առանձնապես Ավ. Իսահակյանի համար։

Այնուհետև Հովհաննիսյանին ձայնակցեց մի համեստ բանաստեղծ Հովհ. Կոստանյանը.

Էյ, հալա՛լ է, Արփաչայի ջուրը զարկում է ափին,
Ափին զարկում, երգ է ասում, զարթեցնում է իմ հոգին։

Իհարկե, այս մի երկու էպիզոդիկ երգերը չէին կարող մի բանաստեղծ ծնեցնել։ Արդեն երաժշտության բնագավառում Կարա-Մուրզան գյուղական երգերով ողողել էր քաղաքները։ Հայ հասարակական խավերում կենդանացել էր կամ ճիշտը՝ վերակենդանացել էր դեմոկրատական ոգին։ Նորագույն պոեզիան միտում էր դեպի ժողովուրդը։ Այնպես որ՝ ժողովրդական երգը օդի մեջ էր։

Բայց ինչ որ էպիզոդ էր Հովհաննիսյանի և Կոստանյանի համար, դառավ պատմություն Իսահակյանի համար։

Աբովյանի նման նա ողջ հոգով սուզվեց ժողովրդական տարերքի մեջ և գտավ իր հարազատությունը։

Արդեն իսկ Ավ. Իսահակյանի մանկությունն ու պատանեկությունը իբր քաղցր երազ սահել-անցել էր գյուղում, ժողովրդի մեջ։

Այնպես որ՝ Ավ. Իսահակյանը «Չհասարակացավ» հանկարծ։ Նա «հասարակ» էր մանկուց։ Միայն վառ և այրող պատկերներով հիշեց նա իր մանկության և պատանեկության աշխարհը։ Նա վերցրեց ժողովրդական «շվին», մնում էր փչել և կախարդական շվին կսկսեր դայլայլել վարժ ու հարազատ։

Այսպիսով, Ավ. Իսահակյանը վերադարձավ «տուն», իր ժողովրդի մեջ և ժողովուրդը նրան ընդունեց առաջին օրն իսկ, ընդունեց նրան իբրև հարազատի և համարեց նրան այնպես մեծ, ինչպես այսօր է։

Այսպես կարող էր լինել մի բանաստեղծ, որ ժողովրդական էր օրգանապես, ի ծնե։ Բայց ի՞նչ էր նշանակում ժողովրդական բանաստեղծ։ Հնում, նեղ մտքով, ժողովուրդ կոչվում և համարվում էր քաղաքի արհեստավորությունը և գյուղական բնակչությունը։ Ինտելիգենցիան մնում էր սրանց շուրջը, նայած իր մտայնության և տրամադրություններին, իբրև դեմոկրատական խավ։

Սակայն ավելի կարևոր է այստեղ սահմանել մի բավական հեղեղուկ, առարկություններ վերցնող միտք,— որո՞նք են ժողովրդական բանաստեղծի իբրև այդպիսին լինելու ատրիբուտները. գաղափարները, թեմատիկան, ոճը, լեզուն, արվեստը։ Համառոտաբան լինելու համար այսքան միայն ասեմ, որ ժողովրդական բանաստեղծ խիստ մտքով նա է, ով գրում է ջան-գյուլումներ, բայաթիներ «շիքյաստաներ» և այլ ժողովրդական-աշուղական երգեր։ Այդպիսի ինտելիգենտ բանաստեղծ շատ հազվագյուտ է, անգամ կարելի է ասել գոյություն չունի։ Իսկական ժողովրդական երգն ստեղծողը միայն ժողովուրդն է, իր անհայտ նախաձեռնող երգչով և սրան օժանդակող ու մշակող փոքր կամ մեծ կոլեկտիվով։ Ամենաժողովրդական ձևերով գրող բանաստեղծը միայն կարող է նմանեցնել արվեստական կերպով։ Այդպիսի հատ ու կենտ կտորներ ունի անգամ ինքը Իսահակյանը։

Ա՜խ, աղչիկ արտի միջին,
Ջա՜ն աղչիկ, վարդի միջին.
Յոթ տարի քեզ սիրել եմ
Սրտիս սև դարդի միջին։

Չես իմանում զուտ ժողովրդակա՞ն երգ է սա, առնված իր սեփական ստեղծագործությունների համար իբրև մոտտո, թե գրված է ժողովրդական

չան-գյուլումի, քառյակ երգի նմանողությամբ մի սեփական ստեղծագործություն։

Ահա և «Ժողովրդական բայաթիներ» (իր խոսքն է՝ «Ժողովրդական» շարքից։

Հոգուդ մեռնիմ մեղք չունիմ։
Խղճի արի, մեղք չունիմ,
Աչքս տեսավ, սիրտս ուզեց,
Ախր ես ի՞նչ մեղք ունեմ։

Այս քառյակը դեռ գնա ու գա, ահա մի ուրիշը՝ «սպիտակ թելերով կարած»։

Վարդս նոր էր, կոկոն դարձավ,
Կոկոնի մեջ էլ բառամավ.
Սիրտս քեզնով նոր պիտ բացվեր,
Թոռոմելը քեզնից եղավ ...

Ավ. Իսահակյանը հեռու է նման ստեղծագործություններից, որ կարծես զուտ ժողովրդական լինելու հնարավորությունն ունեն։ Նա կրթված և մշակված մի անհատ էր, գրում էր իր սեփական երգերը, գրում էր Շիրակի ոչ-լրիվ կանոնավոր բարբառով, բայց որը ունի Շիրակի բարբառի թեքում և այն էլ ոչ միշտ։ Լեզվաբանների համար մի կարևոր խնդիր է ուսումնասիրել այդ լեզուն և եզրակացություն հանել, թե որն է գերակշռում բանաստեղծի ստեղծագործության մեջ. բարբառային ձևե՞րը, թե գրական լեզուն։ Չի կարելի բանաստեղծի երգերում շատ էլ նշել զուտ ժողովրդական ոճերի առատություն. այդպիսի ոճեր կան, բայց գերազանցությունը գրական-սեփականներն են։ Կառուցվածքը, տաղաչափությունը կա նրա ոտնավորի մեջ որոշ չափով, ավելի խուսափելով, բայց գերակշռողը սեփական ստեղծագործական ձևերն են։

Ուրեմն ի՞նչ մնաց ժողովրդականից մի այսպիսի ժողովրդական մեծ պոետի, որ իբրև այդպիսին լինելու արժանիքն ունի մեր աչքում։ Մնաց շատ մեծ բան և գլխավորը։ Ոգին։ Ահա այս ժողովրդական ուժեղ ոգին է, ամենից առաջ, որ պետք է որոնել Իսահակյանի ստեղծագործության մեջ։ Սրանով է նա նվաճել ժողովրդի անհուն սերն ու պաշտպանությունը։ Ժողովրդին հարկավոր էր իր ոգին, հարազատությունը, իր ձգտումները, իր երազանքները, իր առաջադիմության բարձրանալու, վիհանալու խոյանքը։

Ահա այսպիսի պայմանավորվածությունը միայն հնարավորություն տվեց Իսահակյանին՝ չկաշկանդվել արվեստական երգի սահմանափակվածությամբ, ժողովրդական իսկական երգի համարյա անհնարին, դժվար և ավելորդ աշխատանքից՝ ազատ շարժվել ու ստեղծագործել, ոչ կրկնել, տալ իր գաղափարները, իր թեմաները, լեզվա-ոճական սեփական արվեստը։

Գլխավորն ու նշանակալիցը այն էր, ուրեմն, որ Իսահակյանը մեկնակետ ընտրեր ժողովուրդը, ժողովրդական ստեղծագործության ոգին և մնար նրան հասկանալի արվեստի սահմաններում՝ մշակելով ժողովրդի ոգուն հարազատ իր արվեստը, բարձրանար և բարձրացներ ժողովրդին։

Ահա այս էր, որ կատարեց Իսահակյանը բարձր, մեծատաղանդ արվեստով։

Ավետիք Իսահակյանի ստեղծագործությունը բազմազան է, որքան էլ այդպես չթվա առաջին ակնարկից։ Այդ բովանդակությունը իր հասարակ ցանկով

անգամ կհերքի մի այնպիսի կարծիքը, թե նա նեղ մտքով ժողովրդական բանաստեղծ է։ Տեսնենք այդ։ Նրա փոքր ձևի լիրիկան, որ նվիրված է սիրո վերին աստիճան բազմազան տրամադրություններին, խառն՝ բնության, մարդկային սրտի բարդ, երբեմն լայն ու խոր ապրումներով ու խոհերով, այնքան անհանգիստ, երբեմն քմահաճ է, որ միանգամայն ցույց է տալիս բանաստեղծ անհատի բարձր մշակույթը և անհատականությունը։ Այստեղ և պատանեկան կեղծ պեսիմիզմն է, և սուտ հուսահատությունը, քաղցր տրտունջը ունայն, վշտերով լի կյանքից,— առաջին ստույգ նշանը նոր կյանք մտած խռովկան պատանու անսուտ և բուռն կենսասիրությունը։ Այնուհետև առաջին փորձերին հետևում են արդեն երիտասարդական հասակի անհանգստությունն ու լուրջ մտքերը հասարակական շարիքի արմատի որոնումների մեջ, շտրիխներ կենսական բարիքի անարդար բաշխման մասին, ֆանտազիաներ, թռիչքներ տիեզերական անհունության մեջ, խորհելու, աշխարհըմբռնման անհագուրդ ծարավ։ Այնուհետև երիտասարդ պոետի դիմաց կանգնում է իր նահատակ ժողովրդի տրագեդիան, ավերն ու արյունը, փորձերը կոչում անել մարդկության արդարադատության, կառչելը նախնիների հերոսական պատմության, քաջալերելու, հպարտ դարձնելու, բարձրացնելու համար իր ժողովուրդը։ Ավետիք Իսահակյանի ստեղծագործության մեջ նկատվում է զարմանալի միասնություն բովանդակության և ձևի։ Սա արդյունք է մեծ տաղանդի առկայության։ Բայց այս միասնությունն ավելի կոնկրետ է զգացվում, երբ դուք ուշադրություն կդարձնեք պոետի շոշափած նյութի լեզվա-ոճական հատկություններին։ Վերցնենք նրա արտահայտությունները.— Արագածի զառ փեշերը, սև մութ ամպերը, որ դիզվել են նրա ճակատին, այստեղ բյուրեղ լիճը, ուռենիների անուշ լացը, սոսիների սոսափը, հայրենի ճահիճը, եղեգները տրտում, տխուր, մարմանդը լուռ ու վեհ, վճիտ աղբյուրը, վարդը, տուղտը, հովի շնկշնկոցը, ուղտը, եղնիկները, կռունկները, նաշխուն հավքերը՝ Հայաստանի ողջ ֆլորան ու ֆաունան, սարերը, ձորերը, ճամփաները, դաշտերը։ Իսահակյանը աստղերն անգամ հայրենացրեց։ Որքան հարազատ և ուժեղ է հետևյալ պատկերը.

Քուրիկ, վերքս լավ է հիմի,
Մի սև սպի տեղը կա,
Էն սև սպին սև ամպի պես
Սևցուց դեմքը արևի
Ու ման կուգամ սև շուքի պես
Սարե՞ր, ձորե՞ր ամայի ...։

Քարքարոտ Հայաստանի կիզիչ արև, հեռավոր մի սևինք. ամայի, շոր, թախծալի ճամփաներ։

Ուրեմն դեռ քիչ էր ձևի և բովանդակության միասնությունը։ Նաև պետք էր բովանդակության ու ձևի սպեցիֆիկումը. հայրենի ժողովրդի և բնության նկարչությունը՝ ժողովրդի և իր հոգուն հարազատ։

Ես սխալ մեթոդ կարծես ընտրեցի. սկսեցի լեզվա-ոճական արտաքին կողմից, ձևից թերևս։ Սակայն արդեն ասացինք, Իսահակյանի ձևը ինքնին բովանդակություն է։ Ներքին ձև։ Վերցրեք այլ ոճեր բանաստեղծի երկերից.—

Հե՜յ ջան, հայրենի՜ք, ինչքա՜ն սիրում ես,
Սարերդ կորած երկնի մովի մեջ
Ջրերդ անո՜ւշ, հովերդ անուշ,
Մենակ բալեքդ արյուն ծովի մեջ։

Կամ՝

Մեր սարերեն, մեր ձորերեն
Պղտոր-պղտոր կուգաս Արաղ.
Մեր սրտերեն, խոր աչքերեն
Արուն քամեր՝ կերթաս Արաղ։

Ի՛վ Հայաստանի բնությունը և՛ հայ ժողովրդի պատմությունը, և՛ հայ ժողովրդի և իր ընկալումը, բնության տպավորությունը, և՛ լեզվա-ոճական հարազատությունը և՛ անհատ մշակված պոետի ինքնությունը, սեփական դեմքը։ Մխասնություն, ժողովրդայնություն ներդաշնակ ու հարազատ։

Կամ՝

Ա՜խ մեր սիրտը լիքը դարդ ցավ.
Օր ու արև չտեսանք,
Վա՜խ մեր կյանքը սևով անցավ,
Աշխարհից բան չիմացանք։

. . . . . .

Խեղճ աղքատի հոգին դուրս գա,
Քարից հողից հաց քամե,
Բեռով հացը հարուստին տա,
Հարուստն ուտե, վայելե։

Բայց և ահա այնտեղ, ուր գրեթե կորչում է հայ ժողովրդական լեզուն ու ոճը և փոխարենը հանդես է գալիս բարձր կլասիկ լեզուն և ոճը, համաժողովրդական այլ հատկությունների ընդգրկումը.

Մեր հոյակապ հին վանքերի մութ խուցերում, մենության մեջ
Պատմիչները մեր վշտահար, մեղմ կանթեղի լույսով անշեջ.
Մի նշխարով, մի կում ջրով և ճգնությամբ գիշերն անքուն,
Պատմությունը մեր գրեցին մագաղաթի վրա դժգույն։
Մեր գեղջուկի պարզ խրճիթում, սուրբ օջախի շուրջը նստած
Դուսանները մեր խանդավառ, աղջիները գինի ու հաց
Վիպերգեցին հաղթանակը դյուցազների մեր բյուրավոր։

. . . . . .

Կամ՝

Լուսակերտ է ապարանքը Թադմորի,
Անապատում, որպես երազ ոսկեհյուս,
Յոթն հարյուր սյուն վրա մարմարի
Սլանում է աշտարակը երկնասույզ։

Այստեղ առաջինը նվիրված է ժողովրդական վեպի «Սասունցի Դավթի» հագարամյակին։ Խարուսիկ և բարձր ոճը, այն իրոք բարձր է, բայց ոչ ճոռոմ։

Դա ավելի շուտ պարզ բարդն է, Հովհաննիսյանական բարձր գրական ռեալիստական լեզուն և ոճն են։ Բայց գաղափա՞րը, ի՞նչ սիրով և քաջալերիչ ուժով վեր է հանված ժողովրդի հանճարը, կորովը, անընկճելի ոգին։

Անցնենք Իսահակյանի մոնումենտներին և մի թռուցիկ ակնարկ նետենք նրանց վրա։ Ահա— «Աբու-Լալա-Մահարի» լիրիկական պոեմը։ Սա նույնպես գրված է բարձր լեզվով և ոճով։ Թվում է, թե մեր բանաստեղծը այստեղ շատ է անհատական և հեռու ժողովրդայնությունից։ Բայց դա երևութական է։ Սա լուրջ տիրադներ էր ուղղում Աբու-Լալա-Մահարիի բերանով Բաղդադի հասարակությանն և,— եթե մենք չենք ընկնի վուլգար սոցիոլոգիզմի մեջ,— ականատես ենք լինում, թե ինչպես է Մահարի-Իսահակյանը դատապարտում Բաղդադի ողջ հասարակությունը անխտիր, երբ այնտեղ ապրում էր նաև շահագործվողը, զրկվողը, ազնիվը, անմեղը։ Սա անշուշտ, ծայրահեղություն էր, բայց ոչ պատանեկան, այլ երիտասարդ, տաքարյուն բանաստեղծի։ Բանաստեղծի, որ խոսում է հիպերբոլիկ ոճով։ Ինչպես՝ ֆար աշխարհ, փուչ աշխարհ է անվանում, իր իսկ սիրած գեղեցիկ հայրենիքը, հազար ու մի բարիքներով լցված աշխարհը՝ ուր նա և իր ժողովուրդը ուրախանում, վայելում են կյանքի նաև ուրախությունները։

Ինչո՞ւ է այդպես Իսահակյանը։ Կա՞ր որևէ տրամաբանություն նրա աշխարհըմբռնման, աշխարհզացման, հասարակական մարդկային կեցության բազմազան երևույթների անդրադարձման մեջ։ Մենք իր ժամանակ ժպտացել ենք նրա պատանեկան սուտ վշտերի վրա, որոնք իրոք՝ ուրախություններ էին, հասկացել ենք խռոված պատանու ծայրահեղությունները։ Բայց քանի պատանությունը մոտեցավ երիտասարդության, այրակտն հասակի, բանաստեղծի պրոբլեմները լրջացան և նա ենթակա դառավ քննադատական պատասխանատվության։ Նրա ծայրահեղությունները, որ առաջ անլուրջ էին, այստեղ ծանր բովանդակություն ստացան։ Դա մեզ չի շփոթեցնի, եթե մենք լուրջ և խորը թափանցենք բանաստեղծի ինքնության ու էության մեջ։ Պեսիմիստը չոր մաթեմատիկ հաշիվներով է դատում կյանքի մասին։ Կռիվը, ներվայնությունը, ցասումը, հետևապես և չափազանցությունը օպտիմիստական կենսահաստատ երևույթներ են։

Հենց այս տիրադային պոեմի կողքին ահա մի այլ մոնումենտ՝ «Սասմա Մհերը»։ Սա կանոնական կլասիկ ժողովրդական էպոսի գեղարվեստական մշակում չէ, այլ էպոսի սյուժեն և գաղափարախոսությունը լայնորեն օգտագործված սեփական արվեստի մի կերտվածք, ժողովրդական գրական մի կառուցվածք։ Այս վիպերգում Ավետիք Իսահակյանը մեր առաջ պատկերում և իր սեփական ուժերով ու ժողովրդական էպոսի օգնությամբ՝ կերտում է մի լրիվ կերպար և ժողովրդի հետ միացած սրում, առանձնացնում է այդ կերպարը։ Այստեղ պոեմը հասնում է իր կուլմինացիային։ Իսահակյանի մշտախռով ոգին, նրա ազատության դանգի դողանջը, նրա մահարիական ցասումը, նրա բանաստեղծական փախուստը «Բաղդադից», այստեղ փոխվել, դառել է մարտական հարված չարիքի արմատին, աշխարհի «ռամկացում», փոխարկել է ժողովրդի ազատագրության երգի։

Սխալ է ոմանց պահանջը, որ Մհերը գրվեր իբրև ժողովրդական էպոսի կանոնական, ժողովրդական էպոս։ Այդպես պահանջողները մոռանում են, որ, այդպիսի էպոսը արդեն ժողովուրդը ստեղծել է և նրանից լավն էլ ոչ ոք չի կարող։ Եվ էականն ու կարևորը այստեղ մեր անհատ բանաստեղծն ինքն էր մեզ

համար։ Սա ինքնուրույն ստեղծագործություն էր, որը տոգորված էր խորին, ուժեղ ժողովրդայնությամբ։ Սա չպիտի մոռանալ և պետք է գնահատել ամենից առաջ...

Ավետիք Իսահակյանի արձակը, որին մենք չենք կարող անդրադառնալ ժամանակի սղության պատճառով, իր ժողովրդայնականության հետ, որ կոլորիտային է, կենդանի, հարազատ և բազմազան, ունի և մի հիմնական կողմ— ռեալիստական է, պարզ և ուժեղ։ Շատ առանձնահատուկ է նաև այդ արձակը։ Ավանդություններ, ասույթներ, հուշեր... Անվերջ շարք, որի մեջ երևում են նրա թռիչքները դեպի և՛ երևակայական-ավանդական աշխարհը, և՛ իրական հասարակական կյանքը։ Մի մեծ առանձնահատկություն այստեղ կա։— Իսահակյանը ընտրում է արտակարգը, խոհականը, հերոսականը։

Մեր նյութի սահմանները նեղ են և մենք չենք կարողանա այստեղ ծավալվել և խոսել Ավ. Իսահակյանի ստեղծագործության ողջ բովանդակության մասին՝ թողնելով այդ անել մյուս զեկուցողներին։ Իմ նյութն էր որոշել Ավ. Իսահակյանի ինքնությունը և նրա արվեստի ժողովրդայնությունը։

Ամփոփման մեջ առնելով մեր նյութը՝ մենք գալիս ենք այն եզրակացության, որ Ավետիք Իսահակյանի ինքնությունը կազմավորվեց հայ ժողովրդի ինքնության նման։ Այդ էլ պայմանավորեց նրա ժողովրդայնությունը իր ողջ խորությամբ։ Մենք տեսանք, որ հատ-հատ հնչյունները, որ լսվեցին Հովհաննիսյանի և Կոստանյանի երգերի մեջ՝ բավական եղան, որ զարթեցնեին այդպիսի երգերի իսկական մեծ բանաստեղծին, զարթեցնեին դրանց մեծ երգողին։ Եկավ մեծ երգողը և լցրեց հայ երկիրը այնպիսի հզոր երգով, որ ըստ էության սկիզբ դրեց նոր բանաստեղծության— Իսահակյանական բանաստեղծության։

Այստեղ, ի դեպ, տեղն է ասել, որ ազդեցությունները ոչ միայն Իսահակյանի դեպքում, այլև համաշխարհային ողջ գրականության մեջ՝ մեծ առավելություն է ընդունողի համար, սակայն մի շատ մեծ վերապահությամբ, այն, որ այդ ազդեցությունը յուրացվի և հիմք դառնա նոր, մեծ վերելքի համար. այսինքն՝ ինքնանա, ազգայնանա, դառնա սեփական կուլտուրա և փոխ տրվի ուրիշներին։ Այդպես է եղել հայ ժողովրդի կուլտուրան։

Ավ. Իսահակյանի ստեղծագործական դիապազոնն ընդգրկեց իր մեջ և՛ գեղջկական, հովվական մոտիվներ, և՛ անհատական-լիրիկական երգեր,— մայր հայրենի տուն ու օջախի, պանդխտության վիշտ, հայրենակարոտ, և հայրենիքին, հայ ժողովրդի հերոսական պատմության, նրա հանճարին, մեծագործություններին նվիրված ձոներ և ողբասացություններ, և ժողովրդական էպոսի գրական-փիլիսոփայական մոմենտ, և «Աբու-Լալա-Մահարիի» նման դրամատիկ շնչով գրված պոեմներ, և արևելյան կլասիկայից նյութ առած լեգենդներ, հեքիաթներ, և ինքնատիպ ոճի արձակ պատմվածքներ, ավանդություններ, հիշողություն-պատկերներ և այլն, և այլն։

Այս ամբողջ գործը՝ գեղջկականից սկսած մինչև բիբլիական, էպիկական արևելյան և հայ կլասիկային արժանի երգերը, այս բոլորը ցույց են տալիս այն լայնածավալ սահմանները, որ ընդգրկեց Իսահակյանը։ Այս ամենի մեջ նա հանդես բերեց բարձր-գրական մեծ ընդհանրացումներ, խոր խոհական ոգի և իմաստություն։ Եվ ոչ մի բանաստեղծ իրենից առաջ, իրեն ժամանակակից չունեցավ այդ բաղմաբովանդակությունն ու ծավալը։ Իսահակյան փիլիսոփան և մտածողը երբեմն խլացվել է նրա ժողովրդական երգի բարձր որոտի մեջ։

Ավ. Իսահակյանը թափառող, որոնող, մտածող, հարցապնդող է եղել

սկզբից մինչև այժմ։ Տառապել է նրա ոգին տիեզերական պրոբլեմներով։ Իր բոլոր փոքր ու մեծ երգերում այս գիծը երևացել է։ Նրա «Մհեր» էպոսը փիլիսոփայություն է ըստ ամենայնի, և ուժեղ մարտակոչ, նրա «Աբու-Լալա-Մահարին», «Արևելյան ավանդավեպը» լիրիկա-սատիրական մի գործ է, որ հասարակական չարիքի դեմ է ուղղված։

Ահա որտեղ տեղն է մեկընդմիշտ հաստատելու, որ Ավ. Իսահակյանը ժողովրդական պոետ չի նեղ բանահյուսական մտքով, նա էպոսների և բալլադների գեղարվեստական մշակող-ստիլիզատոր չի, այլ գողտրիկ լիրիկական երգի, հասարակական տրիբունային ծաղկող, բարձր լայն բանաստեղծ փիլիսոփա է։

Ավ. Իսահակյանը երգեց ջերմ, սրտագին, խորը, և հայ ժողովուրդը երգեց նրա հետ։ Այդ երգն սկսվեց տասնյակ տարիներ առաջ, չի լռում այժմ և կհնչի հայ ժողովրդի բերանում իրենից և մեզանից հետո։

Թող խանդավառությամբ, թախիծով, վշտով, հույսերով և խոհերով անցած այս 80-ամյա բազմաբեղուն կյանքը դառնա իր և մեզ համար մի հաղթանակի տոն։ Երկա՜ր օրեր ու տարիներ հայ ժողովրդի հայրենական մեծատաղանդ, մեծ բանաստեղծին։